

## ՀԱՄԱՐՆԱԾ ԼՈՒՐԵՐ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՎԵՍՏ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԿՑԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ.—Հայկական ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ-  
ՆԵՐԻ ԱԿԴԵՄԻՔԱՅԻ Յ օր տեղող ընդհանուր ժողովը  
վերջացրեց իր աշխատանքները Նա հանրագումարի  
թերեց 1951 թ. ըսթացրում Գիտությունների Ակադե-  
միայի գիտնականների կողմից կատարված գիտական  
հետազոտությունների արդյունքները ևսկեց 10 զեկու-  
ցում՝ նվիրված գիտության տարրեր մարզերում ձեռք-  
բերված նվաճումներին։ Հայկական ՍՍՌ Գիտություն-  
ՆԵՐԻ ԱԿԴԵՄԻՔԱՅԻ հիմական անդամ Գր. Ղափանցյա-  
նը հանդես եկավ ոչեզպի զարգացման ներքին օրինք-  
ները զեկուցումով։ Այսուհետեւ ժողովը լսեց Հայկա-  
կան ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզի-  
դենս (փոխնախագահ) Ս. Ներսիսյանի զեկուցումը՝  
«Ամերիկյան իմպերիալիզմի Մերձակոր Արևելքի  
երկրները թափանցելու պատմությունից» թեմայով։  
Դվինի հնագիտական պեղումների արդյունքների մա-  
սսին զեկուցեց պատմական գիտությունների թեկնածու  
Կ. Ղափառարյանը։ Ընդհանուր ժողովը լսեց նաև ֆի-  
զիկո-մաթեմատիկական գիտությունների դոկտոր Ս.  
Մերգելյանի զեկուցումը՝ «Մատավորությունների տե-  
սության մի քանի հարցերի մասին» և կենսաբանա-  
կան գիտությունների դոկտոր Ա. Ալեքսանյանի զեկու-  
ցումը՝ «Ենթավային սիստեմի առաջականության» մի  
քանի հարցերի մասին» թեմայով։ Հայկական ՍՍՌ  
Գիտությունների Ակադեմիայի Մատավորության ար-  
շավագիւմը հետազոտությունների արդյունքներին էր  
նվիրված երկրաբանական գիտությունների թեկնածու  
Գ. Բաղդասարյանի զեկուցումը։ Ծեսպութեալիում ցո-  
րենի բերքատվության բարձրացման գյուղատնտեսա-  
կան հետազոտությունների արդյունքների մասին զե-  
կուցեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի  
հիմական անդամ Գ. Ղափթանը։ Ընդհանուր ժողովը  
լսեց նաև ուրիշ հետաքրքի զեկուցումներ Եզրափակիւ-  
նիստում ելույթ ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտություն-  
ների Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը և  
գործունեությունը 1951 թ. և 1952 թ. աշխատանքնե-  
րի ծրագրերը զեկուցումով։

ԵՐԵՎԱՆԻ ՄՈՂՈՐԱԿԱՑՈՒՅԹԻ ՊԼԱՆԸ ՏՐԱՋԱԿԱՑՈՒՅԹԻ  
ԲԱՑՈՒՅԹԸ.— Մարտի 27-ին Երևանի գիտա-լուսավորական թանգարանի դահլիճներից մեկում տեղի ունեցալ բազմաբային մոլորակացույցի բացումը։ Դա մայրաշաղաթի կուպտուրական կյանքում մեծ իրադարձություն էր։ Մոլորակացույցը հատուկ սարբավորումների միջոցով ստեղծված է տիեզերական երևույթների պատ-

**ԱՀԱՎԵԲՄԻՒ. —** Տարեցտարի բարեկավուու ևն Ալա-  
վերդու պղնձահաշման կոմքինատի բանվոր-ժառայու-  
թերի կուսուր-կենցաղային պայմանները. Ալավեր-  
դում սկսվել է պղնձառողջների համար նոր ընաելեկ

Տանեա և ցուցէ տալիս, թե ինչպիս են տեղի ունենում աստղային համակարգության ու մոլորակների շարժումները, խալվարումները և նման այլ տիեզերական երելույթները: Նա հնարաբորություն է տալիս դիտողին շշափելի գաղափար կազմել այդ ամենի մասին և հասկանալ այն բարդ երևույթները, որ տեղի են ունենում տիեզերում: Մոլորակացուցիք բացման առթիվ ներածական զրուցով հանգստա եկալ Բյուրականի աստղադիտարանի աշխատակից թ. Մարգարյանը: Այսուհետեւ Երևանի բաղաբային մոլորակացուցիք պետք է անցկացվին ամենօրյա հանրամատչելի զրուցներ տիեզերական զանազան երևույթների շրջարձ:

ՈւԱՀՀՍ ՆԿԱՐԻՉԾ.՝Մոսկվայում Հայկական ՍՍՌ Կուպտուրայի Տանը մեծ հաջողություն ունեցավ Հայկական ՍՍՌ ժողովրդական նկարիչ Ս. Աղաջանյանի ստեղծագործությունների ցուցահանդեսը: Այնտեղ ցուցահանդես էր Հայաստանի Պետական պատկերասրահից վերցված մոտ 100 աշխատանք: Աղաջանյանի վըրձինին են պատկանում բազմաթիվ սրբնաշին դիմակարներ, բնանկարներ, որոնք աչքի են ընկնամ իրենց ճշմարտացիությամբ և անկեղծությամբ: Հայաստանի Պետական պատկերասրահը Աղաջանյանի աշխատանքները նորից վերցրել է ցուցահանման՝ հայկական արվեստի բանառում:

Ո. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՍՏԵՂՄԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՐԵԿՈՆ.—  
Օրիսո, Հայաստանի Թատերական ընկերությունում,  
կայացալ սովորակայ բեմի անվանի վարպետներից  
մեկի՝ ժողովրդական գերասանուշի Ռուբաննա Վար-  
դանյանի ստեղծագործական երեկոն:

Բաղմավաստակ դերասանութեռ անցած ստեղծագործական ուղին բնութագրող զեկուցումով հանդես եկավ ժողովրդական դերասան Գ. Զանիքը կյանքի մեջ մերժութեանը ու Ռ. Վարդանյանին ընդունեց իրեք տաղաղդափոր դերասանութեռ, որ Գ. Սունդուկյանին անվան թատրոնում կատարած երկարամյա, ներշնչված աշխատանքով իրավամբ նվաճել է հազարավոր հանդիսատեսների սեր, դարձել սովետահայ թատրոնի ճանաշված վարպետներից մեկը: Երեկոյի վերջում շնորհակալության սուրով հանդես եկավ Ռ. Վարդանյանը, այնուհետեւ այս կատարեց հատվածներ Մարգարիտի («Պատմի հայր» ժող. դերասան Հր. Ներսիսյանի հետ), Ռանես-կայայի («Թալալինու այգին» վաստ. դերասան Գ. Զարու- յունյանի հետ) դերակատարումներից, ինչպես նաև սրտասամեց սովետահայ բանաստեղծների գործներից իր բանիսը: Դահլիճը շերմորեն ընդունեց սիրելի դե- ասանութեռն:

ՀԻԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

շնչնի շինարարությունը: Վերջնին տարիների ընթացքում  
այստեղ շահճակործման է հանձնվել 30 հազար բառ,  
մետր բնակելի տարածություն: Կոմբինատիվ գարշու-  
թյան համար այս տարի նախատեսված է կառուցել մի

մեծ շենք, ուր կտեղավորվեն նաև բանվորական ակումբը, ճաշարանը և գրադարան-ընթերցարանը:

Այս տարվա վերջին ճամփուզի հանեցրում շահագործման կամ կանձնվի ակումբի շենքը, որի դաշլիճը կտեղավորի 350 մարդ:

Հուզբ ուշադրություն է դարձվում բանվոր-ծառաւլողների և նրանց երեխանների հանգստի կազմակերպման հարցերին: Ամառվա ընթացքում երկրի տարրերը բուժավարերը կրեկնեն: 140 մարդ, պիոներական ճամփարենքը կրեկնեն: 140 մարդ, պիոներական ճամփարենքը կրեկնեն: 300-ից ավելի երեխաններ:

**ՂԱՓԱՆ.** — Քաղաքում հանձնվել են շահագործման պահաժողովների գործարանը և ինկուբատորային (թիսամերենա) կայանը, որը պետք է սպասարկի նաև Գորիսի ու Սեղորո շրջաններին:

Մերենալացման են ենթարկվել տեղական արդյունաբերության կոմբինատի բաժինները և փայտամշակման արտելը: Կոմբինատը այս տարի շրջանի աշխատավորությանը կատարարի մեծ բանակությամբ մահճականներ և գյուղատնտեսական գործիքներ:

Քաղաքի բնակիչները վերջին տարիների ընթացքում պետությունից ստանալով 2 միլիոն ոռուլուց ավելի վարդի, կառուցել են 700 անհատական բնակարաններու Այս տարի անհատական բնակարանների շինարարության համար բաց է թողնված 1 միլիոն 350 հազար ուռուլի երկարատև վարդի, Քաղաքում բացված է նոր դպրոց, գրադարան, խանութ, գցված են փողոցներ, բնակարաններում անց է կացվում էլեկտրականություն և ռադիո:

Շրջաններում գործում են 50 բուժական կետեր, հիվանդանոցներ և ծննդատներ:

Ղափանի խնայդրամարկղի ավանդատունների թիվը 1951 թ. ավելացել է 1250 հոգով: Ավանդների ընդհանուր գումարը 1951 թ. կազմում էր մոտ 1 միլիոն ուռուլի, այսինքն 400 հազարով ավելի քան 1950 թվին:

**Կիրովական ՔԱՂԱՔԻ ԶԱՐԴԱՐՄԱՆ ՆԱԽԱԳԻՒԾԸ.** —

Քաղաքի հիմնարկ-ձեռնարկություններում կայացած աշխատավորության բազմամարդ ժողովներում բըն-նարկեց կիրովականի զարգացման ու բարեկարգման 15-ամյա ծրագրը: Տրագիրը կազմված է պետության նախագծային ինստիտուտի մի խումբ ճարտարապետների կողմէց:

Ըստ նախագծի քաղաքի տերիտորիան մեծանում է 2 անգամ: Պետք է կառուցվեն մի շարք նոր ձեռնարկություններ, կուսուր-լուսավորական ու վարչական շենքեր, կուսայանան նոր թաղամասեր: Նոր ծրագիրը նախատեսում է քաղաքացիների կուսուրական կանքնի համար ստեղծել ավելի լավ պայմաններ: պետք է ստեղծվեն նոր դպրոցներ, տեխնիկումներ, մանկական հիմնարկներ, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատություններ, հանգստի տներ: Տնկվում են նոր այգիներ ու պուրակներ, ընդարձակվում են հերթական կառագա կիրովականը լմելու է գնեցցիկ քաղաք՝ ճարտարապետական կառուցվածքներով, հուշարձաններով, ավանդներով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՏԱՌԱՋԳԻՆԵՐԸ.** — Հայաստանի անտառներն ալքի են ընկում բուսականության զանազան կերպությամբ: լայնատերեն և փշատերեն ծառերի հետ միասին անտառային նշանակալից տարածություններում աճում և նույնիսկ գերակշռում են վայրի պտղառու ծառերը:

1940 թ. Կիրովականի անտառային փորձակայանի գիտաշխատողները առաջարկեցին անտառային պտղատու ծառերի մասսայական աղնվացման փորձ կատարել: Այդ ծառերի օգտագործման առավելությունը կայանում է նաև նրանում, որ նրանք ավելի դիմացկուն են և առաջ բերը են տալիս: Պատվաստման առաջին փորձերը կատարվեցին Կիրովականի և Շահալիի անտառներում 25 հեկտար տարածության վրա:

Հաջող կիրապով աճելով 1.500 պատվաստված ծառեր 1945 թ. ավելցին առաջին բերքը, իսկ 1949 թ. արդ անտառային այգուց հավաքվեց 10 տոննայից ավելի քաղցր, հյութեղի խնձոր ու տանձ, որոնք իրենց համի որակով չեն զիջում կուտարական պտղունիքներն: Այս տարի գարնանը ուսապուրիկայի անտառներում լայնուն պետք է արմատացվի Կիրովականի շրջանի այգեգործների փորձը:

**ԶԱՐԴԻՒԹՅԱՆԱՐ.** — Այսուղ մեծ աշխատանքներ են կատարված պտղատու այգիների տնկման և խաղողի այգիների նորոգման ուղղությամբ: Նոր պտղատու այգիները բանում են 44 հեկտար տարածություն: Տնկված են 70.000 թիվուն և 4000 ծիրանի տնկիներ: 90 հեկտար տարածություն է պատրաստված խաղողի այգիների տնկման համար, Մեծ աշխատանքներ են տարվում ոռոգման ցանցի պատրաստման և մաքրման ուղղությամբ:

**ՄԱՆԱԾՆԿՈՒԾԸ.** — Երևանի կենների հրապարակում անց են կացվում խոշոր ծառերի տընկման աշխատանքներ: Աշխատանքները մերձնայացված են, որի շնորհիվ արագործներ իրագործվեց Կառավարական տան և «Արարատ» տրեստի շենքի մոտի մալիթերի ծառատնկությունը:

Երևանի քաղաքային Սովորություն կանաչապատման արեստը այս տարի առաջին անգամ կիրառում է խոշոր, 20—25 ամյա ծառերի տնկում: Մարտ և ապրիլ ամիսների ընթացքում Երևանի փողոցներում, քաղաքային այգիներում և պուրակներում կտնկվեն մոտ 520 հազար գեղագործող ծառեր: Լայն թափ են սուացել ծառատնկման աշխատանքները Հրազդանի աջափին կառուցվող պուրակի տերիտորիայում: Այս տարի այստեղ պետք է տնկվեն 335 հազար տարրեր տեսակի ծառեր:

**ԱՐԹԻԿԻ ԾՆՂԱԿԱՆ ՀԱՄԱԼԱՌԱՄ.** — Արթիկի միջնակարգ զպրոցը կազմակերպել է եղբայրաց ծնողական համալարան, որին մասնակցում են 54 մարդ: Դպրոցի փորձառու դասատուններ Վ. Արրահամբանը, Վ. Միրզոյանը և ուրիշներ զեկուցումներ են կարգացել «Ծնողների օգնությունը դպրոցականների տնային աշխատանքների կատարման գործում», «Ծնողների հայ

զինակության մասին, «Գիտակցական կարգապահություն», «Դպրոց և ընտանիք» թեմաներով՝ Սնողների երեխոյան համալսարանում ցուցադրվում են կինանկարներ, դպրոցականների ուժերով՝ կազմակերպվում գեղարվեստական ինքնագործունեության երեկոներ և այլն. Պարապմունքներն անց են կացվում շաբաթական 2 անգամ. Սնողները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում դեպի այդ պարապմունքները.

ՄՆԽԱՏՆԵՐ ԿՈՂԵԿԾԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.—Կոլտնտեսային գյուղում չերմ հոգատարություն են ցուցաբերում մոր և մանկան նկատմամբ: Գյուղատնտեսական արտելները մեծ միջոցներ են տրամադրում ծննդատների կազմակերպման համար: Այս արդի Շամշագինի շրջանի գյուղերում բացվել է 3 ծննդա-

տուն: Բարեկարգ ծննդատներ են ստեղծել Արտաշատի շրջանի Գետաղատ, Հոկտեմբերյանի շրջանի Բամբակաշատ և այլ գյուղերու:

ԱՊԱՐԱՆ.—Երշանի գյուղերում բնակվող բազմազակ մայրերը տարեկան մոտ 1 միլիոն ռուբլի նպաստ են ստանում պետությունից: Մուալյան գյուղի բնակչության Փ. Մարդարյանը, որը ծնել և զատիքարակ է 12 երեխաներ, 71 հազար ռուբլի նպաստ է ստացել պետությունից, Ա. Հարությունյանը (Չքաղաղ գյուղից) ստացել է 50 հազար ռուբլի և այլն: Պետության միջցներով լրջինտրունում և գյուղերում բաց են արված մանկամասներ, մանկապարտեզներ, մանկական կոնսուլտացիաներ և մանկական բուժական հիմնարկներ:

### ՈՒՍՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ ՆԱԽԻԾԱԾ ԳԻ-  
ՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ (ՆՍՏԱՇՐՋԱՆ).—Դպրոցների դասա-  
տոմներին օգնելու նպատակով Հայկական ՍՍՌ կու-  
սավորության մինիստրության դպրոցների գիտա-հե-  
տազոտական ինստիտուտը իր հերթական գիտական  
սեփան (նստաշրջանը) անցկացրեց Լենինականում:

Սեպիայում, որին մասնակցում էին Լենինականի դպրոցների բազմաթիվ ուսուցիչներ, զեկուցումներ կարգացին ֆիլոդիմիական գիտությունների թեկնածուներ Ա. Գրիգորյանը՝ «Ճայոց լեզվի դասավանդման խենքները՝ ընկեր Ստալինի լեզվի աշխատակիցների աշխա-  
տությունների լուսի տակ», Տ. Աթայանը՝ «Խուսաց լեզվի ուսուցումը գրականության դասերին» և մանկավարժական գիտությունների գոկտոր-պրոֆեսոր Տ. Քարամյանը՝ «Կրկնությունը որպես յուրացման ամ-  
րացման միջոց» թեմայով, Սեսիան լսեց նաև Ինստի-

տուտի գիտական աշխատակիցներ Մխիթարյանի և Զիլակյանի զեկուցումները, որոնք նվիրված էին զա-  
սավանդման մեթոդներին:

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՎԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐԻ.—Երևանի բաղադրային ժողովրդական կրթության բաժինը անց է կացնում մանկավարժական ընթերցումներ բազմարի դպրոցների աշխատակիցների համար: Ընթերցումներն անց են կացվում առաջավագը մանկավարժական փորձի փոխանակման և մասսայականացման նպատակով: Ընթերցումների ժամանակ զեկուցումներով հանդես են գալիք առաջավագը ուսուցիչներ, գիրեկատըներ, ուսմաս-  
վարներ: Մարտի 14-ին սկսվեցին 1952 թ. հերթական մանկավարժական ընթերցումները, որին մասնակցում են Երևանի դպրոցների 50 առաջավոր ուսուցիչներ, գիրեկատըներ և ուսմասվարներ: Ինթերցումները կտևեն մեկ ամիս:

